ԼՂԻՄ. ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆՎՈՒՄ Է

ՏԱՍՍ-ի վերջին հաղորդագրությունը, թեպետև ընդհանուր գծերով, ամբողջապես արտացոլել է իրադրության լարվածության աստիճանը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում, որն այս օրերին հայտնվել է շրջափակման մեջ: Բերենք հակաօրինական գործողությունների բազմաթիվ օրինակներից միայն մեկը: Օգոստոսի 12-ի լույս 13-ի գիշերը Աղդամ-Ստեփանակերտ ուղեմասում անհայտ անձինք կիրառել են պայթուցիկ սարք, որից վնասվել է երկաթգիծը: Դրա հետևանքով մարզը չի կարողացել ժամանակին ընդունել պարեն, շինանյութեր և համակցված կեր բերող 15 վագոն: Միաժամանակ մարզային կենտրոնից սպառողներին չի առաքվել տարբեր ժողովրդատնտեսական բեռներով լի շուրջ 20 վագոն: Աղդամի կայարանում երկար մնաց Բաքու-Ստեփանակերտ մարդատար գնացքը: Պողպատե մայրուղին վերականգնվեց նույն օրը: Տվյալ փաստի առընչությամբ քրեական գործ է հարուցվել: Հատուկ շրջանի պարետությունը միջոցներ է ձեռնարկում այսուհետև նման քայլերը բացառելու համար:

Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջը ծավալված վիճաբանությունում Ադրբեջանական ԽՍՀ-ի մասնայական լրատվության միջոցները ավելի ու ավելի հաճախ են կոչ անում, որպես կանոն, հայկական կողմին, հարգանքով վերաբերվել երկրի հիմնական օրենքին: Սակայն անհասկանալի է, ԽՍՀՄ սահմանադրության ո՞ր հոդվածի և երկրի Գերագույն խորհրդի նախագահության ո՞ր հրամանագրի համաձայն է իրականացվում ինքնավար մարզ տանող ճանապարհների շրջափակումը, որտեղ առանց այդ էլ սահմանված է կառավարման հատուկ ձև: Նման, ուղղակի ասենք, սոցիալիստական հասարակությանը անհարիր գործողությունները ինչպես են համատեղվում ԼՂԻՄ-ի իրավիճակը առողջացնելու և ադրբեջանական ու հայկական կողմերի փոխըմբռնում հաստատելու ձգտման հետ: Մարդկային բարոյականության ո՞ր չափանիշներից ելնելով է իրականացվում Լեռնային Ղարաբաղի հայերի արհեստական մեկուսացումը միութենական հանրապետությունից, որտեղ ապրում են նրանց հայրենակիցները և որին պատուհասել է ամբողջ աշխարհը ցնցած տարերային աղետը: Ղարաբաղցիների համար դժվար է գտնել այս հարցերի պատասխանները:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)
Ստեփանակերտ